ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/5-1»

ք. Երևան «30» 03 2021թ.

Վարչապետի աշխատակազմն ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Բաբայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին մատուցել լաբորատորիական ծառայություններ (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող NN 1 և 1.3, 1.4, 1.5 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի NN 1 և 1.3, 1.4, 1.5 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի NN 1 և 1.3, 1.4, 1.5 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի NN 1 և 1.3, 1.4, 1.5 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի NN 1 և 1.3, 1.4, 1.5 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 2350000 (երկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Սույն պայմանագրի համաձայն «Պատվիրատուի» կողմից «Կատարողին» վճարման ենթակա գումարը հաշվարկվում է փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող NN 1.3, 1.4, 1.5 հավելվածների գնացուցակի (նշված գները ներառում են ԱԱՀ):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի NN 1 և 1.3, 1.4, 1.5 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝

պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 1.3, 1.4, 1.5, 2, 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1	ք.Երևան, Կոմիտաս 49/4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հայբիզնեսբանկ ՓԲԸ Կենյան մ/հ
ՀՀ 900011024052	ՀՀ 1150012490810100
ՀԿՀՀ 02505554	ՀԿՀՀ 00219641
	Տնօրենի պաշտոնակատար Ա.Բաղդասյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 30 » 03 2021 թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/5-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը**	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը / ՀՀ դրամ /	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը*
5	71911100/4	Լաբորատորիական ծառայություններ ջրի փորձաքննության համար / խմելու ջրի ճառագայթային անվտանգություն (ռադիոնուկլիդներ)/: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է համաձայն կից N 1.3 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնացուցակի	դրամ	1000000	1	ՀՀ Ք. Երևան, Արարատի Մարզ, Կոտայքի Մարզ, Արագածոտնի մարզ, Արմավիրի մարզ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.
7	71911100/5	Լաբորատորիական ծառայություններ աղմուկի փորձաքննության համար: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է համաձայն կից N 1.4 հավելվածի ՝ տեխնիկական բնութագիր - գնացուցակի	դրամ	1000000	1	ՀՀ Ք. Երևան, Արարատի Մարզ, Կոտայքի Մարզ, Արագածոտնի մարզ, Արմավիրի մարզ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.
8	71911100/9	Լաբորատորիական ծառայություններ աղմուկի փորձաքննության համար: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է համաձայն կից N 1.4 հավելվածի ՝ տեխնիկական բնութագիր - գնացուցակի	դրամ	200000	1	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Լոռու մարզ, Շիրակի մարզ, Սյունիքի մարզ, Տավուշի մարզ, Վայոց Ձորի մարզ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.
9	71911100/10	Լաբորատորիական ծառայություններ թրթռման փորձաքննության համար / Տեղային թրթռում և ընդհանուր թրթռում /: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է համաձայն կից N 1.5 հավելվածի ՝ տեխնիկական բնութագիր - գնացուցակի	դրամ	100000	1	ՀՀ Ք. Երևան, Արարատի Մարզ, Կոտայքի Մարզ, Արագածոտնի մարզ, Արմավիրի մարզ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.
10	71911100/11	Լաբորատորիական ծառայություններ թրթռման փորձաքննության համար / Տեղային թրթռում և ընդհանուր թրթռում /: Տեխնիկական բնութագիրը ներկայացված է համաձայն կից N 1.5 հավելվածի ՝ տեխնիկական բնութագիր - գնացուցակի	դրամ	50000	1	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Լոռու մարզ, Շիրակի մարզ, Սյունիքի մարզ, Տավուշի մարզ, Վայոց Ձորի մարզ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2021թ.

* Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային մատուցման դեպքում՝ առաջին փուլի մատուցման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 21 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը,բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում: Մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

***Լաբորատոր փորձաքննության ավարտից հետո անհրաժեշտ է տրամադրել եզրակացություն:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024057
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Կոմիտաս 49/4
Հայբիզնեսբանկ ՓԲԸ Գլխավոր մ/6
Հ/Հ 1150012490810100
ՀՎՀՀ 00219641
Տնօրենի պաշտոնակատար Ա.Քարայան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.3
« 30 » 03 2021 թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/5-1» ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

№	Ծառայության անվանումը	միավոր գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/
1	**Լաբորատորիական ծառայություններ ջրի փորձաքննության համար /խմելու ջրի ճառագայթային անվտանգություն (ռադիոնուկլիդներ)/, այդ թվում**	
1.1	Ընդհանուր α- ռադիոակտիվություն /Բկ/լ/	8000
1.2	Ընդհանուր β- ռադիոակտիվություն /Բկ/լ/	8000
1.3	Ջրի նմուշառում	4000
Ընդամենը		**20000**

*Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
ՀՀ 900011024057
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Կոմիտաս 49/4
Հայէկոնոմբանկ ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 1150012490810100
ՀՎՀՀ 00219641
Տնօրենի պաշտոնակատար Ա.Ծառայան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1.4
«30» 03 2021 թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/5-1» ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

№	Ծառայության անվանումը	միավոր գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/
1	**Լաբորատորիական ծառայություններ աղմուկի փորձաքննության համար /Թափանցող աղմուկի ձայնային ճնշման թույլատրելի մակարդակներ, ձայնի մակարդակներ, համարժեք և առավելագույն ձայնի մակարդակները բնակելի եվ հասարակական շենքերի սենքերում և բնակելի տարածքում/, այդ թվում**	
1.1	Առողջարանների և հիվանդանոցների հիվանդասենյակներ, հիվանդանոցների վիրահատարաններ /ԴԲԱ/	6000
1.2	Պոլիկլինիկաների, ամբուլատորիաների, դիսպանսերների հիվանդանոցների և առողջարանների բժիշկների կաբինետներ /ԴԲԱ/	6000
1.3	Դասասենյակներ, ուսումնական սենյակներ, ուսուցչանոցներ, ուսումնական հաստատությունների և դպրոցների լսարաններ, կոնֆերենց դահլիճներ, գրադարանների ընթերցասրահներ /ԴԲԱ/	6000
1.4	Բնակարանների սենյակներ, հանգստյան տների, պանսիոնատների, ծերերի և հաշմանդամների տուն-ինտերնատներ, բնակելի տարածքներ, մանկապարտեզների և դպրոց-ինտերնատների, ննջասենյակներ /ԴԲԱ/	6000
1.5	Հանրակացարանի բնակելի սենյակներ և հյուրանոցի համարներ /ԴԲԱ/	6000
1.6	Սրճարանների, ռեստորանների, ճաշարանների սրահներ /ԴԲԱ/	6000
1.7	Խանութների առևտրի սրահներ, օդանավակայանների և կայարանների սպասասրահներ, կենցաղային սպասարկման կազմակերպությունների ընդունման կետեր /ԴԲԱ/	6000
1.8	Առողջարանների և հիվանդանոցների շենքերին անմիջապես հարող տարածքներ /ԴԲԱ/	6000
1.9	Բնակելի շենքերին, պոլիկլինիկաների, ամբուլատորիաների, դիսպանսերների, հանգստյան տների, պանսիոնատների, ծերերի և հաշմանդամների համար տուն-ինտերնատների, մանկապարտեզների, դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների, գրադարանների շենքերին անմիջապես հարող տարածքներ /ԴԲԱ/	6000
1.10	Հյուրանոցներին, հանրակացարաններին անմիջապես հարող տարածքներ /ԴԲԱ/	6000
1.11	Առողջարանների և հիվանդանոցների տարածքում հանգստյան հրապարակներ /ԴԲԱ/	6000
1.12	Միկրոշրջանների և բնակելի շենքների խմբերի, հանգստյան տների պանսիոնատների, ծերերի և հաշմանդամների տուն-ինտերնատների տարածքում հանգստյան հրապարակներ, մանկապարտեզների, դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների հրապարակներ /ԴԲԱ/	6000
1.13	Ստեղծագործական գիտական գործունեություն, նախագծում, ծրագրավորում, դասավանդում և ուսուցում, բժշկական գործունեություն: Նախագծակոնստրուկտորային գրասենյակներում, հաշվիչ մեքենաների-ծրագրավորողների, տեսական աշխատանքների և տվյալների վերամշակման լաբորատորիաներում բուժկետերի հիվանդների ընդունման սենյակներում /ԴԲԱ/	6000
1.14	Կենտրոնացում պահանջող բարձրորակավորման աշխատանք, ադմինիստրատիվ ղեկավար գործունեություն, լաբորատորիաներում չափիչ և անալիտիկ աշխատանքներ, աշխատատեղեր արտադրամասի կառավարման ապարատի շինություններում, գրասենյակների աշխատանքային սենյակներում, լաբորատորիայում /ԴԲԱ/	6000
1.15	Աշխատատեղեր դիսպետչերական ծառայության սենքերում, հեռախոսով խոսակցական կապով դիտարկման և հեռավահանակային կառավարման կաբինետներում և սենքերում, մեքենագրական գրասենյակներում, ճշգրիտ	6000

	հավաքման տեղամասերում, հեռախոսային և հեռագրային կայաններում, վարպետների տեղամասերում, հաշվիչ մեքենաների տեղեկատվության մշակման դահլիճներում /ԴԲԱ/	
1.16	Առանց խոսակցակառավարման աշխատասենյակներում վահանակով աշխատատեղեր, աղմուկ առաջացնող սարքավորումներով լաբորատորիասենյակներում, հաշվիչ մեքենաների աղմուկ առաջացնող սենյակներում, ագրեգատների տեղադրման շենքերում /ԴԲԱ/	6000
1.17	Բոլոր տեսակի աշխատանքների կատարում արտադրական սենքերի և կազմակերպությունների տարածքների մշտական աշխատատեղերում /ԴԲԱ/	6000
1.18	Համերգային և այլ դահլիճներ համերգի ժամանակ /ԴԲԱ/	6000
1.19	Պարելու համար նախատեսված դահլիճներ /ԴԲԱ/	6000
1.20	Ռեստորանների, սրճարանների, բարերի, հանրային սննդի այլ կազմակերպությունների (մերկապար, կարաոկե, դիսկոտեկ ակումբ և այլն) հաճախորդների սպասարկման տարածքներում, այդ թվում՝ բացօթյա /ԴԲԱ/	6000
1.21	Բաց պարային հարթակներ այգիներում, հանգստի գոտիներում և այլն /ԴԲԱ/	6000
Ընդամենը		**126000**

*Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն,1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024057
ՀԿՀՀ 02505554

(ստորագրություն)

L.S

ԿԱՏԱՐՈՂ

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Կոմիտաս 49/4
Հայբիզնեսբանկ ՓԲԸ Կինյան մ/հ
ՀՀ 11500124908010100
ՀԿՀՀ 00219641
Տնօրենի պաշտոնակատար Ա.Բաբայան

/ստորագրություն/

L.S

Հավելված N 1.5
«30» 03 2021 թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/5-1» ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր-գնացուցակ*

№	Ծառայության անվանումը	միավոր գին մեկ փորձաքննության համար /ՀՀ դրամ/
1	**Լաբորատորիական ծառայություններ թրթռման փորձաքննության համար /Տեղային թրթռում և ընդհանուր թրթռում/, այդ թվում**	
1.1	Աշխատատեղերում ձեռքով ղեկավարվող մեքենաներից և սարքավորումներից, Աշխատատեղերում տրանսպորտային միջոցներից, տրանսպորտատեխնոլոգիական և տեխնոլոգիական գործընթացներից	6000
Ընդամենը		**6000**

*Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 90001024057
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Կոմիտաս 49/4
Հայբիզնեսբանկ ՓԲԸ Կիևյան մ/ճ
ՀՎՀՀ 11500124908100
ՀՎՀՀ 00219641
Տնօրենի պաշտոնակատար Ա.Բարսեղյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
«30» 03 2021 թ. կնքված
«ԿԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/5-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	71911100/4	Լաբորատորիական ծառայություններ ջրի փորձաքննության համար / խմելու ջրի ճառագայթային անվտանգություն (ռադիոնուկլիդներ)/:	-	-	-	300000	300000	300000	500000	500000	500000	1000000	1000000	1000000	1000000
7	71911100/5	Լաբորատորիական ծառայություններ աղմուկի փորձաքննության համար:	-	-	-	300000	300000	300000	500000	500000	500000	1000000	1000000	1000000	1000000
8	71911100/9	Լաբորատորիական ծառայություններ աղմուկի փորձաքննության համար:	-	-	-	60000	60000	60000	100000	100000	100000	200000	200000	200000	200000
9	71911100/10	Լաբորատորիական ծառայություններ թրթռման փորձաքննության համար / Տեղային թրթռում և ընդհանուր թրթռում /:	-	-	-	30000	30000	30000	50000	50000	50000	100000	100000	100000	100000
10	71911100/11	Լաբորատորիական ծառայություններ թրթռման փորձաքննության համար / Տեղային թրթռում և ընդհանուր թրթռում /:	-	-	-	15000	15000	15000	25000	25000	25000	50000	50000	50000	50000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024057
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Կոմիտաս 49/4
Հայբիզնեսբանկ ՓԲԸ Կիլիկիա մ/մ
Հ/Հ 1150012490810100
ՀՎՀՀ 00219641
Տնօրենի պաշտոնակատար Ա.Բաբայան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 3
«30» 03 2021 թ. կնքված
«ՎԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/5-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«30» 03 2021 թ. կնքված
«ԿԱ-ԱԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/5-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն